

կը հետեւի նաեւ Դաւրիթեցի (319), օծութիւնը տեղի ունեցաւ 1629 Յունուար 13ին. Մովսէս «առեալ յանձն ղթախանձանքն բազմաց՝ ընկալաւ զսլատիւ եւ զաստիճան հայրապետական եւ օծմամբ Հոգւոյն օծեալ եղեւ կաթողիկոս եւ հովուապետ ի շրջապայութեան թվին ՌՀԸ, ի Յունվար ամսոյ ԺԳ. յաւուր Տնօրէնութեան Տեառն. եւ նստեալ պանծալի պայազատ յԱթոռ նախնոյն մերոյ սրբոյն Գրիգորի» :

Հաւանօրէն սխալ տեղեկութեանց վրայ յեցած է Գ. Դարանաղցի, երբ կը գրէ թէ օծութիւնը տեղի ունեցած է «ի յաւուրս աղուհացից պահոցն, ի Մեծի Հինգշաբաթով աւուրն, որ է թվ. ||||» : Դարանաղցի նկատի ունի կամ 1628 Ապրիլ 10 եւ կամ 1629, Ապրիլ 2: Ինչպէս չէ կրցած Դարանաղցի ճշդել թուականը, նոյնպէս պէտք է ենթադրենք թէ յիշողութիւնը դաւաճանած է նաեւ օծման օրուան մասին :

Մովսէսի ընտրութիւնը օծումէն յառաջ արդէն պատճառած էր ընդհանուր խնդրութիւն. այս տեսակէտէ ուշադրութեան արժանի են հետեւեալ երկու յիշատակարանները, որոնցմէ մին գրուած է Շահ Աբասի օրով եւ երկրորդը 1628 Դեկտեմբեր 14ին. ասոնք են. «Գրեցաւ Տօնացոյցս այս (ձեռամբ Վարդերես սարկաւազին) ի հայրապետութեան այսմ նահանգի տէր Մովսէս կաթողիկոսին եւ ի թագաւորութեան Ֆռանգաց ազգի